Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

# ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
**Հիմնադրամի հոգաբարձուների**
**խորհրդի 14-06-2021 թ. որոշմամբ**
**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»**
**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**
**հիմնադրամի 2020 թ. գործունեության մասին**

| | | |
|---|---|---|
| **1. Հիմնադրամի՝** | | |
| 1.1 Լրիվ անվանումը | | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ |
| 1.2 Գտնվելու վայրը | | ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆ 1 |
| 1.3 Պետական գրանցման համարը | | 222.160.00548 |
| 1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | | 2005-11-21 |
| 1.5 ՀՎՀՀ-ն | | 02580459 |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | | +(374)10547512 |
| | | +(374)55588049 |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | | r2e2.am |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | | info@r2e2.am |
| **2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝** | | |
| | | |
| **3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝** | | |
| | | |
| **4. Կառավարչի անուն, ազգանուն՝** | | |
| Կարեն Ասատրյան | | |
| **5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը** | 29 | |
| **6. Անձեռնմխելի կապիտալի չափը** | 0 | |
| **7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ** | 0 | |
| **8. Ֆինանսավորման աղբյուրները՝** | | |
| 8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի | 8.2 Ծրագրի անվանումը | 8.3 Չափը |
| 8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր | | |
| | Էներգախնայողության ծրագիր | 373540405 |
| 8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր | | |
| | Էներգախնայողության ծրագիր | 226064793 |
| | Խորհրդատվական ծառայություն | 47928779 |
| | ՀՀ բանկերում ներդրված ավանդներից տոկոսներ | 12634779 |

| | | |
|---|---|---|
| | Ֆինանսական կառույցների միջոցով ՀՀ համայնքներում էներգաարդյունավետության ծրագիր | 210302551 |
| | Կայուն Զարգացման Նպատակների իրագործման նորարարական լուծումներ | 107327000 |
| | Նախապատրաստման աջակցություն Ծրագիր | 49375000 |
| 8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր | | |
| | Խորհրդատվական ծառայություն | 1950000 |
| **9. Հիմնադրի ներդրումը՝** | | |
| 9.1 Դրամական միջոցներ | 0 | |
| 9.2 Գույք | 9.2.1 Տեսակը | 9.2.2 Արժեքը |
| | | |
| **10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները** | | |
| 10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝ | 10.2 Նվիրված/նվիրաբերված գույք | |
| | 10.2.1 Տեսակը | 10.2.2 Արժեքը |
| 10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ | | |
| | | |
| 10.1.2 Իրավաբանական անձինք | | |
| | | |
| 10.1.3 Ֆիզիկական անձինք | | |
| | | |
| **11. Իրականացված ծրագրերը՝** | | |
| 11.1 Ծրագրի անվանումը | 11.2 Ծախսված գումարը | |
| Էներգախնայողության ծրագիր | 50250426 | |
| Խորհրդատվական ծառայություն | 11035296 | |
| ՀՀ բանկերում ավանդների ներդրում | 370000000 | |
| Ֆինանսական կառույցների միջոցով ՀՀ համայնքներում էներգաարդյունավետության ծրագիր | 241423084 | |
| Կայուն Զարգացման Նպատակների իրագործման նորարարական լուծումներ | 106166088 | |
| **12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը** | 985076924 | |
| **13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը** | 778874894 | |

**Նշումներ՝**

Հիմնադրամը իր գործունեության շրջանակներում տրամադրում է փոխառություններ ՀՀ պետական կազմակերպություններին, ՀՀ ֆինանսական կազմակերպություններին, մատուցում է ծառայություններ, ստանում է դրամաշնորհներ, ՀՀ բանկերում ներդնում է ավանդներ: Տրամադրված փոխառություններից և ներդրված ավանդներից ստանում է տոկոսային եկամուտ: ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված վարկի հետ կապված դրամական ելքերը վերագրվում են Էներգախնայողության և Ֆինանսական կառույցների միջոցով ՀՀ համայնքներում էնենգաարդյունավետության ծրագրերին

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 42 թերթից:

թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն ______________________________________________

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ ______________________________________________

ստորագրությունը, անունը, ազգանունը

Digitally signed by BARKHANAJYAN GAYANE 7707760239
Date: 2021.06.21 18:11:22 GMT+04:00

## Բովանդակություն


Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն ........ 3

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն ........ 4

Զուտ ակտիվում փոփոխությունների մասին հաշվետվություն ........ 5

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն ........ 6

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ ........ 7

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն ........ 7
2. Պատրաստման հիմունք ........ 9
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն ........ 12
4. Հիմնական միջոցներ ........ 16
5. Դեբիտորական պարտքեր ........ 18
6. Տրված փոխառություններ ........ 20
7. Ժամկետային ավանդներ ........ 22
8. Դրամական միջոցներ ........ 24
9. Ակտիվներին վերաբերող շնորհներ ........ 24
10. Ստացված փոխառություններ ........ 25
11. Հետաձգված եկամուտ ........ 26
12. Կրեդիտորական պարտքեր ........ 27
13. Վարձակալություն ........ 27
14. Շնորհներից եկամուտ ........ 28
15. Ֆինանսական եկամուտ ........ 28
16. Ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստ ........ 28
17. Ծառայությունների մատուցումից եկամուտ ........ 28
18. Ծրագրային ծախսեր ........ 29
19. Վարչական ծախսեր ........ 29
20. Փոխարժեքի տարբերությունից օգուտ/ (կորուստ) ........ 29
21. Շահութահարկի գծով ծախս ........ 29
22. ՖՀՄՍ 16-ի փոփոխության ազդեցություն ........ 30
23. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ ........ 30
24. Պայմանականություններ ........ 35
25. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ........ 36
26. Ֆինանսական գործունեության գծով պարտավորությունների շարժ ........ 36
27. Կապակցված կողմերի հետ գործարքներ ........ 37
28. Իրական արժեքի չափման բացահայտումներ ........ 38

**Ծանուցում**

Սույն հաշվետվություններն ի սկզբանե պատրաստվել են հայերեն, ինչից հետո թարգմանվել են անգլերեն՝ օգտագործողների հարմարության համար: Հայերեն և անգլերեն տարբերակների միջև անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում առաջնային պետք է համարել հայերեն տարբերակը:

«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամ

## Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
## 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

| | Ծնթ. | 2020թ. դեկտեմբերի 31 հազար դրամ | 2019թ. դեկտեմբերի 31 հազար դրամ |
|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | |
| Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Հիմնական միջոցներ | 4 | 17,751 | 70,805 |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ | 13 | 43,032 | 51,638 |
| Ոչ նյութական ակտիվներ | | 352 | 1,308 |
| Դեբիտորական պարտքեր | 5 | 1,569,999 | 2,094,446 |
| Տրված փոխառություններ | 6 | 855,935 | 819,642 |
| | | **2,487,069** | **3,037,839** |
| Ընթացիկ ակտիվներ | | | |
| Պաշարներ | | 20,936 | 14,647 |
| Դեբիտորական պարտքեր | 5 | 633,141 | 599,993 |
| Տրված փոխառություններ | 6 | 197,794 | 150,942 |
| Ժամկետային ավանդներ | 7 | 419,676 | 47,094 |
| Դրամական միջոցներ | 8 | 226,976 | 177,774 |
| | | **1,498,523** | **990,450** |
| **Ընդամենը ակտիվներ** | | **3,985,592** | **4,028,289** |
| **Պարտավորություններ և զուտ ակտիվներ** | | | |
| Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| Վարձակալության գծով պարտավորություն | 13 | 48,306 | 49,095 |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 9 | 19,626 | 73,234 |
| Ստացված փոխառություններ | 10 | 3,737,022 | 3,633,233 |
| | | **3,804,954** | **3,755,562** |
| Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Վարձակալության գծով պարտավորություն | 13 | - | 6,821 |
| Ստացված փոխառություններ | 10 | 85,347 | 85,270 |
| Հետաձգված եկամուտ | 11 | 62,176 | 12,831 |
| Կրեդիտորական պարտքեր | 12 | 100,673 | 71,984 |
| | | **248,196** | **176,906** |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **4,053,150** | **3,932,468** |
| **Զուտ ակտիվ** | | | |
| **Կուտակված արդյունք** | | **(67,558)** | **95,821** |
| **Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվ** | | **3,985,592** | **4,028,289** |

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի» ղեկավարության կողմից 2021թ. մայիսի 14-ին:

**Կարեն Ասատրյան**
Տնօրեն

**Գայանե Քարխանաջյան**
Ֆինանսական ղեկավար

«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամ

## Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

| | Ծնթ. | 2020թ. | 2019թ. |
|---|---|---|---|
| | | հազար դրամ | հազար դրամ |
| Շնորհներից եկամուտ | 14 | 159,949 | 208,097 |
| Ֆինանսական եկամուտ | 15 | 43,450 | 37,139 |
| Ծառայությունների մատուցումից եկամուտ | 17 | 91,267 | 65,614 |
| Այլ եկամուտ | | 5,563 | 11,035 |
| Ծրագրային ծախսեր | 18 | (72,376) | (128,555) |
| Վարչական ծախսեր | 19 | (196,382) | (168,776) |
| Ֆինանսական ծախսեր | 10 | (28,150) | (28,182) |
| **Գործառնական գործունեությունից արդյունք** | | **3,321** | **(3,628)** |
| Ֆինանսական ակտիվների գծով անհավաքելիության կորստի նվազում/ (աճ) | 16 | (2,821) | 3,280 |
| Ֆինանսական եկամուտ (ավանդների գծով) | 15 | 16,113 | 2,869 |
| Փոխարժեքային տարբերության գծով օգուտ/ (կորուստ), զուտ | 20 | (175,079) | 17,973 |
| **Արդյունք մինչև հարկերը** | | **(158,466)** | **20,494** |
| Շահութահարկի գծով ծախս | 21 | (4,913) | (8,172) |
| **Տարվա արդյունք** | | **(163,379)** | **12,322** |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունք | | - | - |
| **Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք** | | **(163,379)** | **12,322** |

**Կարեն Ասատրյան**
Տնօրեն

**Գայանե Բարխանաջյան**
Ֆինանսական ղեկավար

«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամ

## Զուտ ակտիվում փոփոխությունների մասին հաշվետվություն
## 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

| | Կուտակված արդյունք | Ընդամենը |
|---|---|---|
| | հազար դրամ | հազար դրամ |
| **2019թ. հունվարի 1-ի դրությամբ** | **85,992** | **85,992** |
| ՖՀՄՍ 16-ի որդեգրման արդյունքը (ծնթ. 22) | (2,493) | (2,493) |
| Տարվա արդյունք | 12,322 | 12,322 |
| **2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **95,821** | **95,821** |
| **2020թ. հունվարի 1-ի դրությամբ** | **95,821** | **95,821** |
| Տարվա արդյունք | (163,379) | (163,379) |
| **2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **(67,558)** | **(67,558)** |

**Կարեն Ասատրյան**
Տնօրեն

**Գայանե Բարխանաջյան**
Ֆինանսական ղեկավար

«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

| | 2020թ. հազար դրամ | 2019թ. հազար դրամ |
|---|---|---|
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Տարվա արդյունք՝ | (163,379) | 12,322 |
| **Ճշգրտումներ՝** | | |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 54,912 | 57,815 |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ամորտիզացիա | 8,606 | 8,607 |
| Շահութահարկի գծով ծախս | 4,913 | 8,172 |
| Տոկոսային ծախսեր | 33,871 | 34,693 |
| Տոկոսային եկամուտ փոխառություններից | (43,450) | (37,139) |
| Տոկոսային եկամուտ ժամկետային ավանդներից | (16,113) | (2,869) |
| Շնորհներից եկամուտ | (159,949) | (208,097) |
| Տրամադրված փոխառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստների աճ/(նվազում) | 2,908 | (12,737) |
| Դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների աճ/(նվազում) | (1,792) | (2,301) |
| Ավանդների գծով ակնկալվող պարտքային կորուստների աճ/(նվազում) | 1,705 | (361) |
| Փոխարժեքային տարբերությունից կորուստ/ (օգուտ) | 175,079 | (17,973) |
| Գործառնական արդյունք նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները | (102,689) | (159,868) |
| | | |
| Դեբիտորական պարտքերի նվազում/(աճ) | 491,299 | 496,621 |
| Պաշարների նվազում/(աճ) | (6,290) | (631) |
| Կրեդիտորական պարտքերի (նվազում)/աճ | 28,689 | (2,104) |
| | 411,009 | 334,018 |
| | | |
| Վճարված տոկոսներ | (28,072) | (28,289) |
| Վճարված շահութահարկ | (1,339) | (7,203) |
| **Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսք** | **381,598** | **298,526** |
| | | |
| **Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (829) | (895) |
| Ժամկետային ավանդների մարում/(ներդրում), զուտ | (370,000) | (13) |
| Ստացված շնորհներ և շնորհների հետ վերադարձ, զուտ | 156,607 | (162,627) |
| Ստացված տոկոսային եկամուտ | 54,232 | 41,459 |
| Փոխառությունների տրամադրում, զուտ | (84,200) | (374,614) |
| **Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսք** | **(244,190)** | **(496,690)** |
| | | |
| **Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Ստացված փոխառությունների մարումներ | (82,170) | (81,242) |
| Վարձակալության պարտավորության մարում | (13,332) | (13,332) |
| **Ֆինանսավորման գործունեությունից զուտ դրամական հոսքեր** | **(95,502)** | **(94,574)** |
| | | |
| **Դրամական միջոցների զուտ հոսքեր** | **41,906** | **(292,738)** |
| Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա | 7,296 | (4,000) |
| **Դրամական միջոցներ տարվա սկզբում** | **177,774** | **474,512** |
| **Դրամական միջոցներ տարվա վերջում** | **226,976** | **177,774** |

**Կարեն Ասատրյան**
Տնօրեն

**Գայանե Բարխուդարյան**
Ֆինանսական ղեկավար

**«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամ**
**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**
**2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ**

## 1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամը հիմնվել է Հայաստանի Հանրապետության կառավարության (Կառավարություն) 2005թ. ապրիլի 28-ի թիվ 799 որոշմամբ: Հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է (Հիմնադիր): Հիմնադրամի նպատակներն են.

- էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում ներդրումների իրականացմանը նպաստելը,
- էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում Հայաստանի շուկայի զարգացմանը խթանելը,
- շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա տեխնածին ազդեցության նվազեցմանը նպաստելը,
- էներգետիկ անվտանգության, էներգետիկ համակարգերի հուսալիության աստիճանի բարձրացմանն ուղղված մեխանիզմների մշակումը,
- ՀՀ ֆինանսների նախարարության կողմից համապատասխան լիազորություններ տրամադրվելու դեպքում՝ ՀՀ ֆինանսների նախարարության հետ կնքվող պայմանագրերի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության անունից ոլորտի զարգացմանը խթանող վարկային և դրամաշնորհային ծրագրերի իրականացման կազմակերպումը:

2012թ. հուլիսի 30-ին ՀՀ կառավարության 2012թ. փետրվարի 16-ի թիվ 174-Ն որոշմամբ Գործակալության պայմանագիր է կնքվել Հիմնադրամի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև, համաձայն որի Հիմնադրամը համաձայնվում է իրականացնել էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ֆինանսավորման ծրագիր:

Ծրագիրը նախատեսում է հետևյալ բաղադրիչները.

| | |
|---|---|
| Բաղադրիչ 1 | Ծրագրի միջոցները տրամադրվում են մասնակից ֆինանսական հաստատություններին էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ծրագրերում համապատասխան պահանջները բավարարող շահառուների կողմից կատարած ներդրումները ֆինանսավորելու նպատակով: |
| Բաղադրիչ 2 | Հիմնադրամը կատարում է էներգախնայողության հետ կապված ներդրումներ հանրային շենքերում: |

2018-2020թթ.-ին Հիմնադրամն իրականացրել է հետևյալ ծրագրերը.

- «էներգախնայողության ծրագիր», որը ֆինանսավորվել էր 2.12 մլն ԱՄՆ դոլարի չափով Համաշխարհային Բանկի դրամաշնորհի, ինչպես նաև Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից կառավարվող 8,5 մլն. ԱՄՆ դոլարին համարժեք շրջանառու միջոցների հաշվին: Շրջանառու միջոցները հանդիսանում են Հիմնադրամի և ՀՀ ֆինանսների նախարության միջև 2012թ. հուլիսի 30-ին կնքված գործակալության համաձայնագրով հատկացված գումարները, որոնք նախատեսված են Հիմնադրամի կողմից էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ֆինանսավորման ծրագրի իրականացումն ապահովելու համար: Դրամաշնորհային ծրագիրը ավարտվել է 2016 թվականի հունիսի 30-ին, սակայն Հիմնադրամի շրջանառու ֆոնդի գումարներով ծրագրի իրականացումը շարունակվում է:

- «Արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի նախապատրաստման ծրագիր», որը ֆինանսավորվում է 2015 թվականի հունիսի 30-ին ՀՀ կառավարության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրված Արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի նախապատրաստման TFOA0418 Դրամաշնորհի համաձայնագրի հիման վրա: Ծրագրի նպատակն է օժանդակել Հայաստանի Հանրապետությանը՝ արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի նախատեսվող ծրագրի նախապատրաստման հարցում, այսինքն՝ կատարել արևային էներգիայի կայանների համար հավանական տեղանքների որոշում, հնարավոր տեղանքների համար տեխնիկա-տնտեսական իրագործելիության ուսումնասիրություն, նախնական ռեսուրսների քարտեզագրում, ընտրված տեղանքներում ցանցի

հետ միացման ներուժի գնահատում, ցանցի հետ միացման ծախսերի գնահատում: Դրամաշնորհային ծրագիրը ավարտել է 2019 թվականի հունիսի 30-ին:

- «Երկրաջերմային հետախուզական հորատման ծրագիր», որը ֆինանսավորվում է 2015թ. հունիսի 16-ին ՀՀ կառավարության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրված Երկրաջերմային հետախուզական հորատման TF0A0544 դրամաշնորհի համաձայնագրի հիման վրա: Ծրագրի նպատակն է՝ Հայաստանում հայտնի հավանական երկրաջերմային տեղանքներից մեկում՝ Քարքարում, հետախուզական հորատման միջոցով՝ էլեկտրաէներգիայի արտադրության համար բավարար ռեսուրսի առկայության և որակի հաստատումը և մասնավոր հատվածին երկրաջերմային էլեկտրակայանի կառուցման գործում ներգրավումը: Ծրագրի վերջնական նպատակը Քարքար տեղամասում երկրաջերմային էլեկտրակայանի կառուցումն է, եթե պաշարների առկայությունը հաստատվի: Դրամաշնորհային ծրագիրը ավարտել է 2019 թվականի մայիսի 31-ին:

- «Հայաստանում կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) իրականացման նորարարական լուծումներ», որը ֆինանսավորվում է 2019թ. հուլիսի 15-ին Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի և Միացյալ ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի միջև ստորագրված N00109316-00108696 դրամաշնորհային համաձայնագրի հիման վրա: Ծրագիրն ուղղված է գյուղական համայնքներում էներգետիկ աղքատության կրճատման խնդրին՝ նոր սերնդի էներգետիկ լուծումների ներդրման միջոցով: Դրամաշնորհի ընդհանուր գումարը կազմում է 440,000 ԱՄՆ դոլար (220,000 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր փուլի համար), որից 342,200 ԱՄՆ դոլարը տրամադրվել է Հիմնադրամին որպես շրջանառու ֆոնդ: Շրջանառու ֆոնդը օգտագործվում է՝ գործընկեր բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների միջոցով չգազաֆիկացված համայնքներում (Գեղարքունիք, Շիրակ) 200 ընտանիքների վարկերի տրամադրում արևային ջրատաքացուցիչների և այլ ֆոտովոլտային մոդուլների ձեռքբերման և տեղադրման համար:

  2020թ.-ի մարտի 4-ից մինչև հոկտեմբերի 31-ը իրականացվել է ծրագրի երկրորդ փուլը՝ 220,000 ԱՄՆ դոլար ֆինանսավորմամբ:

- «Հայաստանի Հանրապետության չգազիֆիկացված համայնքների իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց էներգաարդյունավետության բարձրացման ծրագիր». «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամը, «Ակբա Լիզինգ» ՎԿ ՓԲԸ-ն, «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն և «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն 2017թ.-ին ստորագրել են պայմանագրեր Հայաստանում չգազաֆիկացված համայնքների էներգաարդյունավետության բարձրացման ծրագրի վերաբերյալ: Ծրագրի նպատակն է ֆինանսական կառույցների միջոցով ֆինանսավորել ներդրումները մաքուր էներգիայի ոլորտում: Վերջինս ուղղված է Հայաստանի շուրջ 280 համայնքներում ֆինանսական կազմակերպությունների միջոցով բարձրացնել էներգաարդյունավետության մակարդակը և ֆինանսավորել ներդրումները մաքուր էներգիայի զարգացման ոլորտում:

  Ի սկզբանե ծրագիրը ուղղված է եղել Հայաստանի շուրջ 280 չգազաֆիկացված համայնքների հետ, որոնք ընդգրկում են շուրջ 37 հազար տնային տնտեսություններ, կապված հարցերի լուծմանը: Հետագայում (սկսած 2020թ.-ից) ծրագիրը ընդլայնվել է Հայաստանի Հանրապետության բոլոր համայնքներով:

  Այս ծրագրի իրականացման նպատակով Հիմնադրամը համագործակցում է մի շարք ֆինանսական կառույցների հետ, որոնց թվում են ԱԿԲԱ Բանկը, Գլոբալ Կրեդիտ ՈՒՎԿ-ն, ԱԳԲԱ Լիզինգ ՎԿ-ն, Ագրոլիզինգ Լիզինգային ՎԿ-ն, Արմենիան Լիզինգ Քամփնի ՈւՎԿ-ն, Ֆաստ Կրեդիտ Կապիտալ ՈւՎԿ-ն և Էվոկաբանկը:

- Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի, «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ, «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ առևտրային բանկերի կողմից համատեղ իրականացվող Համայնքային էներգաարդյունավետության ծրագրի նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետության համայնքների կողմից

էներգաարդյունավետությանն ուղղված ներդրումների ֆինանսավորումը: Ավելին, ծրագրի նպատակն է նաև նվազեցնել ոչ արդյունավետ էներգասպառումը և ընդլայնել մաքուր, արդյունավետ, ապահով և մատչելի էներգետիկ տեխնոլոգիաների օգտագործումը: Ձեռնարկված միջոցները կնպաստեն էլեկտրաէներգիայի և ջրատաքացման համար վճարվող գումարի կրճատմանը, հետագայում նաև զրոյացմանը:

- «Ինժեներական խորհրդատվական ծառայությունների տրամադրում Գերմանահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն էներգախնայողության ֆինանսավորմանը ՓՄՁ-ների ոլորտում» - ծրագրի շրջանակներում (Ֆինանսավորող KfW)-Ծրագրի նպատակն է աջակցել էներգախնայողության միջոցառումների ֆինանսավորմանը Հայաստանի ՓՄՁ-ներում:

2020թ.-ին «Նախապատրաստման աջակցության ծրագրի» շրջանակներում՝ Հիմնադրամը Կանաչ կլիմայի հիմնադրամից նոր դրամաշնորհի առաջին փուլի 100,000 ԱՄՆ դոլարն է ստացել: Դրամաշնորհի ամբողջ գումարը կազմում է 254,007 ԱՄՆ դոլար:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Մելիք Ադամյան փ. 1:

Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը 2020թ. կազմել է 22 մարդ (2019թ.՝ 20 մարդ):

## 2. Պատրաստման հիմունք

### 2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:
Ներկայումս ՖՀՄՍ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերությունններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»:

### 2.2 Նոր և վերանայված ստանդարտներ

ա) 2019թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

- ՖՀՄՍ 16 “Վարձակալություն”;
- ՖՀՄՄԿ 23 “Շահութահարկի հաշվառման մոտեցման անորոշություն”:

ՖՀՄՍ 16-ի ազդեցությունը Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա ներկայացված է ծանոթագրություն 22-ում:
ՖՀՄՄԿ 23-ը չունի նշանակալի ազդեցություն Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

բ) Հրապարակված, սակայն դեռևս չգործող ՖՀՄՍ-ների նոր ստանդարտներ և փոփոխություններ

Առկա չեն նոր ստանդարտները, մեկնաբանությունները և փոփոխությունները, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել, որոնք կունենան կամ հնարավոր է ունենան ազդեցություն Հիմնադրամի հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

### 2.3 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական ակտիվների, որոնք չափվել են իրական արժեքի սկզբունքով:

**2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում**

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ներքո:

**2.4.1. Անընդհատության սկզբունք**

Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են անընդհատության սկզբունքով, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում՝ սովորական գործունեության ընթացքում:

Վերջին տարիներին Հիմնադրամը գործառնական գործունեությունից կրել է ֆինանասական վնասներ: Այնուամենայնիվ, ղեկավարությունը համոզված է, որ Հիմնադրամի կրած վնասները չեն առաջացնի խնդիրներ՝ սովորական գործունեության ընթացքում ակտիվներն իրացնելու և պարտավորությունները մարելու հարցում: Ղեկավարության համոզմամբ՝ Հիմնադրամը մոտ ապագայում կգրանցի դրական արդյունքներ, քանի որ ունի պայմանավորվածություններ դոնոր կազմակերպությունների հետ մի շարք ծրագրեր իրականացնելու շուրջ (ծնթ.1):

Հիմնադրամի ղեկավարությունը, հիմնվելով կատարված դատողությունների վրա, ունի հիմնավորված ակնկալիք, որ Հիմնադրամը կարող է շարունակել իր գործառնական գործունեությունը տեսանելի ապագայում: Ուստի Հիմնադրամը շարունակում է որդեգրել անընդհատության սկզբունքը իր ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով:

**2.4.2. Ստացված և տրված փոխառություններ**

Ինչպես ներկայացված է ծանոթագրություններ 5-ում, 6-ում և 10-ում, Հիմնադրամը ստացել է պետական փոխառություններ ցածր տոկոսադրույքով՝ նրանց հաշվին իրականացնելով էներգախնայողության ծրագրեր և տրամադրել փոխառություններ ֆինանսական կազմակերպություններին՝ նմանատիպ ծրագրերի ֆինանսավորման նպատակով:

Հիմնադրամը համարվում է ոչ առևտրային կազմակերպություն և չի հետապնդում շահույթ ստանալու նպատակ, որով մատուցվող ծառայությունների գները՝ հիմնականում հետաձգված վճարման ժամանակացույցով (ծնթ. 2.4.3) և տրամադրված փոխառությունների տոկոսադրույքները սահմանվել են այնքանով, որպեսզի ծածկեն Հիմնադրամի գործառնական ծախսերը տվյալ ծառայության շարունակական մատուցման նպատակով:

Նշվածը հաշվի առնելով, նաև այն, որ նման գումարներով ու պայմաններով փոխառություններ ստանալու և տրամադրելու համար համապատասխան ֆինանսական շուկայի բացակայությունը ՀՀ-ում, Հիմնադրամի ղեկավարության գնահատմամբ ստացված և տրված փոխառությունների հաշվեկշռային արժեքները համապատասխանում են դրանց իրական արժեքներին, և հետևաբար դրանք չեն զեղչվել շուկայական տոկոսադրույքներով: Այնուամենայնիվ, եթե փոփվեն ղեկավարության գնահատումները վերը նշված հարցի շուրջ, ապա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները կենթարկվեն էական փոփոխությունների:

**2.4.3. Դեբիտորական պարտքեր**

ա/ Ղեկավարությունը համոզված է, որ էներգախնայողության ծառայությունների (էներգախնայողության ներդրումներ և էներգետիկ ծառայություններ) գծով դեբիտորական պարտքերը Հիմնադրամի ակտիվներն են և պետք է ներառվեն Հիմնադրամի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում (չնայած այն փաստին, որ իրավական տեսանկյունից Հիմնադրամը այդ գործարքի մասով հանդիսանում է ՀՀ Ֆինանսների նախարարության գործակալը և հանդես է գալիս վերջինիս անունից), քանի որ.

- այդ ծառայությունները մատուցվել են ՀՀ Ֆինանսների նախարարությունից ստացված միջոցների հաշվին և Հիմնադրամը վերջինիս նկատմամբ ունի պարտավորություն,
- Հիմնադրամը նշված գործարքի մասով կրում է արտարժութային ռիսկ, քանի որ ՀՀ Ֆինանսների նախարարությունից կառավարման ստացված միջոցների ավելի շատ արտահայտված են ԱՄՆ դոլարով, իսկ փոխառու միջոցներով Հիմնադրամի կողմից մատուցված էներգետիկ ծառայությունների դիմաց վճարումները կատարվում են հայկական դրամով:

բ/ Համաձայն ղեկավարության գնահատման՝ էներգախնայողության ծառայությունների (էներգախնայողության ներդրումներ և էներգետիկ ծառայություններ) մատուցման գծով դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքները համապատասխանում են դրանց իրական արժեքներին, և հետևաբար դրանք չեն զեղչվել շուկայական տոկոսադրույքներով՝ հաշվի առնելով ծնթ. 2.4.2-ում նշված հանգամանքները:

գ/ Դեբիտորական պարտքերը ստացվում են ՀՀ Կառավարության գործակալությունների կողմից, և ակնկալվող պարտքային կորուստների դրույքաչափերը հիմնված են միջազգային վարկանշային կազմակերպությունների (S&P, Fitch կամ Moody's) կողմից ՀՀ-ին տրված սուվերեն վարկանշի համապատասխան դեֆոլտի հավանականության վրա:

2020թ.-ին և 2019թ.-ին օգտագործվել է S&P-ին համեմատական Moody's -ի կողմից տրամադրված ՀՀ սուվերեն վարկանիշը՝ Ba2: Դեֆոլտի հավանականությունը ճշգրտվում է արտացոլելու ընթացիկ և ապագա մակրոտնտեսական գործոնները, որոնք ազդում են հաճախորդի կողմից չմարված գումարի մարման ունակության վրա: Հիմնադրամը սահմանել է համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ), արտաքին պետական պարտքը և տնտեսական գործունեության ցուցանիշը որպես առավել համապատասխան գործոններ և ըստ այդ գործոնների կարգավորում է ակնկալվող փոփոխությունների համար պատմական կորուստների մակարդակը:

դ/ Հաշվետվության ամսաթվի դրությամբ էներգախնայողության ներդրումներից դեբիտորական պարտքերի կազմում ներառված են նաև այն շինարարական աշխատանքների արժեքը, որոնք դեռևս շահագործման հանձնված չեն, այսինքն, այդ շինարարական աշխատանքների մասով չկան եռակողմ (Հիմնադրամ-կապալառու-հանրային օբյեկտ) ստորագրված ավարտական ակտեր, որոնք վկայում են, որ կատարված աշխատանքները հանրային օբյեկտների կողմից ևս ընդունվում են: Սրանց հետ կապված առկա են միայն շինարարության ընթացիկ հանձնման-ընդունման ակտերը, որոնք ստորագրվում են երկկողմ՝ կապալառուի և Հիմնադրամի միջև: Հետևաբար, դեռևս շահագործման չհանձնված շինարարությունների մասով Հիմնադրամի ձևակերպած դեբիտորական պարտքերը վերագրելի չեն կոնկրետ գործընկերոջ: Սակայն, Հիմնադրամի ղեկավարությունը գնահատում է, որ այդ աշխատանքները ավարտին կհասցվեն ժամանակին և պատշաճ որակով, և հավանականությունը, որ հանրային օբյեկտների կողմից այն կընդունվի, գնահատում է բարձր:

**2.4.4. Վարձակալության հաշվառում**

Վարձակալության ժամկետի որոշումը որոշ վարձակալությունների դեպքում, երբ Հիմնադրամը հանդես է գալիս որպես վարձակալ, ներառյալ՝ արդյո՞ք Հիմնադրամը խելամտորեն համոզված է վարձակալության գծով օպցիոնները կիրառելու (ծնթ. 22) :
Վարձակալության գծով պարտավորության զեղչման տոկոսադրույքի որոշումը ներկայացված է ծնթ. 22-ում:

**2.4.5. Իրական արժեքի չափում**

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններում:
Հիմնադրամի ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

- Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճգրտված)
- Մակարդակ 2: Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից
- Մակարդակ 3: Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:
Իրական արժեքի բացահայտումը ներկայացված է ծնթ. 29-ում:

### 2.5 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:
Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

### 3.1 Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը. 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 522.59 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 641.11 ՀՀ դրամ (31.12.2019թ.՝1 ԱՄՆ դոլարը՝ 479.70 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 537.26 ՀՀ դրամ):

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

### 3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է տարվա արդյունքում:

Մաշվածությունը ճանաչվում է տարվա արդյունքում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

| | |
|---|---|
| Մեքենաներ և սարքավորումներ | 4-5 տարի |
| Տրանսպորտային միջոցներ | 5 տարի |
| Տնտեսական գույք | 5 տարի |
| Այլ | 1-5 տարի |

### 3.3 Վարձակալված ակտիվներ

Վարձակալությունները հաշվառվում են՝ ճանաչելով օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը, բացառությամբ.

- Ցածրարժեք ակտիվների վարձակալությունը, և
- Մինչև 12 ամիս կամ ավելի կարճ ժամկետով վարձակալությունը:

Վարձակալական պարտավորությունները չափվում են վարձակալության ժամկետի ընթացքում կատարվող պայմանագրային վարձավճարների ներկա արժեքով, զեղչված վարձակալությամբ ենթադրվող դրույքով, եթե այդ դրույքը հնարավոր է հեշտությամբ որոշել: Եթե ոչ (սովորաբար պատահող դեպքեր), հաշվարկը կատարվում է կիրառելով վարձակալի կողմից լրացուցիչ փոխառու միջոցների ներգրավման դրույքով:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սկզբնապես չափվում են վարձակալական պարտավորության չափով, հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումները և գումարած հետևյալը.

- վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները
- վարձակալի կողմից կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ, և
- այն ծախսումների գնահատականը, որը վարձակալը կկրի հիմքում ընկած ակտիվն ապամոնտաժելիս կամ քանդելիս:

Սկզբնական ճանաչումից հետո վարձակալության գծով պարտավորությունը ավելացվում է մնացորդային արժեքի նկատմամբ տոկոսային ծախսով և նվազեցվում է կատարված վճարումների չափով:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը ամորտիզացվում է ուղիղ-գծային մեթոդով՝ վարձակալության մնացորդային ժամկետի ընթացքում կամ հիմքային ակտիվի տնտեսական օգտագործման ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է վարձակալության ժամկետից:

### 3.4 Ֆինանսական գործիքներ

#### Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

**Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը**

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները:

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքում:

Ներկայացված ժամանակաշրջաններում Հիմնադրամը չունի որպես այլ համապարփակ արդյունքում իրական արժեքով հաշվառվող դասակարգված ֆինանսական ակտիվներ:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Հիմնադրամի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական եկամտում, ֆինանսական ծախսերում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը արտացոլված է ֆինանսական ակտիվների արժեզրկման կորուստներում: Հիմնադրամի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 23.բ-ում:

**Ֆինանսական ակտիվների հետագա չափումը**

**Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ**

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Հիմնադրամը հաշվառում է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները՝ օգտվելով պարզեցված մոտեցումից և կորուստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Հիմնադրամն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Հիմնադրամը գնահատում է ֆինանսական ակտիվների արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից: ՖՀՄՍ 9-ի՝ արժեզրկմանը ներկայացվող պահանջների կիրառման մանրամասն վերլուծությունն արտացոլված է ծանոթագրություն 23-ում:

**Տրամադրված փոխառություններ**

Հիմնադրամը լրիվ պահուստավորում է բոլոր այն փոխառությունների պորտֆելները, որոնց մարումներն ապահովված են վերջնական փոխառուի կողմից կատարված վճարումներով և որոնց մարման ժամկետից անցել է ավելի քան 90 օր, քանի որ, հիմնվելով անցյալի փորձի վրա, մարման ժամկետը 90 օրով գերազանցելու դեպքում տրամադրված փոխառությունները համարվում են անհավաքագրելի: Այս փոխառությունները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ, ընգրկվում են «Փուլ 3»-ի մեջ: Մինչև 30 օր ժամկետանց փոխառությունների մայր գումարները և տոկոսները ընգրկվում են «Փուլ 1»-ի մեջ, և «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են առաջին դասի ակտիվների համար: 30-ից մինչև 90 օր ժամկետանց փոխառությունների մայր գումարները և տոկոսները ընգրկվում են «Փուլ 2»-ի մեջ, և «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

**Ստացված փոխառություններ**

Ստացված փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս:

Ստացված փոխառությունների վերաբերյալ ղեկավարության կողմից կատարված գնահատումներն ու դատողությունները ներառված են ծանոթագրություն 2.4.2-ում:

**Առևտրային կրեդիտորական պարտքեր**

Առևտրային կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

**3.5. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Հիմնադրամի դրամական միջոցները և նրանց համարժեքները ներառում են բանկային հաշիվների մնացորդները, Կենտրոնական գանձապետարանի հատուկ հաշվի մնացորդները, դրամական միջոցները ճանապարհին և կարճաժամկետ ներդրումները՝ մինչև 3 ամիս ժամկետով:

**3.6 Շնորհներ**

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ ձեռքբերումն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ակտիվներին վերաբերվող շնորհ և սիստեմատիկորեն ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա կոնկրետ ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Շնորհը, որ Հիմնադրամին հատկացվել է ֆինանսական աջակցություն (երբ չկան դրամաշնորհին կից պայմաններ) տրամադրելու նպատակով, ճանաչվում է այն ժամանակաշրջանի արդյունքում, երբ Հիմնադրամը ստանում է շնորհը:

### 3.7 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

### 3.8 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,
(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները:

### 3.9 Հասույթ

Հիմնադրամի հասույթը գոյանում է ստացված նվիրատվություններից, մատուցված ծառայություններից, Հիմնադրամի կողմից տրված փոխառությունների տոկոսներից և այլն:

Որոշելու համար, թե արդյո՞ք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Հիմնադրամն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1. Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
2. Բացահայտել կատարման պարտականությունները
3. Որոշել գործարքի գինը
4. Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
5. Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահի, կամ ժամանակի ընթացքում, երբ Հիմնադրամը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

## 4. Հիմնական միջոցներ

հազար դրամ

| | Մեքենա և սարքավորումներ | Տրանսպորտային միջոցներ | Համակարգչային տեխնիկա և սարքավորումներ | Արտադրատնտեսական գույք և այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| **Սկզբնական արժեք** | | | | | |
| **1 հունվարի 2019թ.** | **279,178** | **29,470** | **41,324** | **14,875** | **364,847** |
| Ավելացում | - | - | - | 895 | 895 |
| **31 դեկտեմբերի 2019թ.** | **279,178** | **29,470** | **41,324** | **15,770** | **365,742** |
| Ավելացում | - | - | 459 | 370 | 829 |
| Նվազեցում | (4,008) | - | (505) | (257) | (4,770) |
| **31 դեկտեմբերի 2020թ.** | **275,170** | **29,470** | **40,968** | **15,883** | **361,801** |

**Կուտակված մաշվածություն**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **1 հունվարի 2019թ.** | **159,005** | **28,614** | **37,390** | **14,422** | **239,431** |
| Տարվա հաշվարկ | 51,892 | 856 | 2,112 | 646 | **55,506** |
| **31 դեկտեմբերի 2019թ.** | **210,897** | **29,470** | **39,502** | **15,068** | **294,937** |
| Տարվա հաշվարկ | 51,019 | - | 2,039 | 825 | **53,883** |
| Նվազեցում | (4,008) | - | (505) | (257) | **(4,770)** |
| **31 դեկտեմբերի 2020թ.** | **257,908** | **29,470** | **40,842** | **15,636** | **344,050** |
| **Զուտ հաշվեկշռային արժեք** | | | | | |
| **1 հունվարի 2019թ.** | **120,173** | **856** | **3,934** | **453** | **125,416** |
| **31 դեկտեմբերի 2019թ.** | **68,281** | **-** | **1,822** | **702** | **70,805** |
| **31 դեկտեմբերի 2020թ.** | **17,262** | **-** | **126** | **247** | **17,751** |

Մաշվածության գծով ծախսը բաշխվել է հետևյալ կերպ՝

| | **2020թ.** | **2019թ.** |
|---|---|---|
| | **հազար դրամ** | **հազար դրամ** |
| Վարչական ծախսեր | 275 | 1,486 |
| Ծրագրային ծախսեր | 53,608 | 54,020 |
| | **53,883** | **55,506** |

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 125,305 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 86,041 հազար դրամ) սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են զրոյական հաշվեկշռային արժեքով:

## 5. Դեբիտորական պարտքեր

| | 2020թ. դեկտեմբերի 31<br>հազար դրամ | 2019թ. դեկտեմբերի 31-ի<br>հազար դրամ |
|---|---|---|
| Ընթացիկ | | |
| էներգախնայողության ծառայությունների մատուցումից դեբիտորական պարտքեր | 633,018 | 599,522 |
| Վարկային կորուստների գծով պահուստներ | (1,754) | (1,794) |
| | 631,264 | 597,728 |
| Կանխավճարներ | 1,843 | 1,550 |
| Այլ | 34 | 715 |
| | **633,141** | **599,993** |
| Ոչ ընթացիկ | | |
| Դեբիտորական պարտքեր էներգախնայողության ներդրումներից | 1,575,245 | 2,101,444 |
| Վարկային կորուստների գծով պահուստներ | (5,246) | (6,998) |
| | **1,569,999** | **2,094,446** |
| **Ընդամենը դեբիտորական պարտքեր** | **2,203,140** | **2,694,439** |
| **Այդ թվում ամորտիզացված արժեքով չափվող դեբիտորական պարտքեր** | **2,201,263** | **2,692,174** |

Կանխավճարները ներառում են հետևյալ կազմակերպություններին վճարված գումարները՝

| | 2020թ. դեկտեմբերի 31<br>հազար դրամ | 2019թ. դեկտեմբերի 31-ի<br>հազար դրամ |
|---|---|---|
| Տարածքի վարձակալության գծով | 1,000 | 1,000 |
| Այլ | 843 | 550 |
| | **1,843** | **1,550** |

էներգախնայողության ներդրումների ծառայությունների մատուցումից դեբիտորական պարտքերը բաղկացած են հետևյալ բաղադրիչներից՝

| | 2020թ. դեկտեմբերի 31 | | 2019թ. դեկտեմբերի 31 | |
|---|---|---|---|---|
| | Ընթացիկ<br>հազար դրամ | Ոչ ընթացիկ<br>հազար դրամ | Ընթացիկ<br>հազար դրամ | Ոչ ընթացիկ<br>հազար դրամ |
| էներգախնայողություն | 593,333 | 1,575,245 | 595,515 | 2,101,444 |
| էներգետիկ ծառայություն | 39,685 | - | 4,007 | - |
| | **633,018** | **1,575,245** | **599,522** | **2,101,444** |

էներգախնայողության ծառայությունների մատուցումից դեբիտորական պարտքերի նկարագրությունը ներկայացված է ստորև:

Համաձայն ՀՀ կառավարության 2012թ. փետրվարի 16-ի թիվ 174-Ն որոշման և 2012թ. Հիմնադրամի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև կնքված գործակալության պայմանագրի, Հիմնադրամը ՀՀ ֆինանսների նախարարությունից կառավարման է ստացել դրամական միջոցներ, էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ֆինանսավորմանն ուղղված ծրագրի իրականացումն ապահովելու նպատակով: Կառավարման ստացված միջոցները տրամադրվել են

Հիմնադրամին տարեկան 0.75%-ով և մինչև 2045թ. մարման ժամկետով: Հիմնադրամին կառավարման հանձնված միջոցները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվել են որպես «Ստացված փոխառություններ», իսկ կառավարման ստացված միջոցների նկատմամբ հաշվեգրված տոկոսային ծախսերը ներկայացված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության «Ֆինանսական ծախսեր» հոդվածում (ծնթ. 10):

Կառավարման ստացված միջոցների հաշվին, ինչպես նաև, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի և ՀՀ կառավարության միջև 2012թ. ապրիլի 20-ին կնքված դրամաշնորհի TF 012163 դրամաշնորհային համաձայնագրով ստացված միջոցների հաշվին Հիմնադրամն իրականացնում է «էներգախնայողության ծրագիր»: Ծրագրի շրջանակներում Հիմնադրամը հանրային օբյեկտներում կատարում է ներդրումներ էներգախնայողության ծառայությունների մատուցման ձևով, որոնք բաղկացած են 2 բաղադրիչից՝ (1) էներգախնայողության ներդրումներ, և (2) էներգետիկ ծառայություններ: Այս ծառայությունները Հիմնադրամը մատուցում է հետևյալ կերպ.

- ընտրում է հատկացվող միջոցների վերադարձը ապահովող գործող իրատեսական մեխանիզմներ ունեցող շահառուների (հանրային օբյեկտներ), այնուհետև կնքում պայմանագրեր կապալառուների հետ, համաձայն որի վերջիններս պարտավորվում են շինարարական աշխատանքներ իրականացել նախապես ընտրված հանրային օբյեկտներում՝ էներգախնայողության սահմանված մակարդակ ապահովելու նպատակով (բաղադրիչ 1՝ էներգախնայողության ներդրումներ);

- իրականացնում է «էներգախնայողության ծրագրի» նախապատրաստման, էներգետիկ ուսումնասիրությունների, գնումների, ֆինանսական կառավարման, մոնիթորինգի, էներգախնայողության չափումների և հավաստումների և այլ ծառայություններ (բաղադրիչ 2՝ էներգետիկ ծառայություններ):

Էներգախնայողության ծառայությունների իրականացման նպատակով Հիմնադրամը կապալառուի հետ պայմանագրի կնքման հետ մեկտեղ էներգախնայողության ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքում նաև շահառուի հետ (հանրային օբյեկտներ), որով սահմանվում է էներգախնայողության ներդրումների և էներգետիկ ծառայությունների արժեքի տարաժամկետ մարման ժամանակացույցը: Արդյունքում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կապալառուների նկատմամբ կրեդիտորական պարտքերի ճանաչման հետ զուգահեռ Հիմնադրամը էներգախնայողության ծառայությունների 1-ին բաղադրիչի մասով (էներգախնայողության ներդրումներ) ճանաչում է դեբիտորական պարտքեր:

Էներգախնայողության ծառայությունների 2-րդ բաղադրիչի մասով Հիմնադրամը ճանաչում է էներգետիկ ծառայությունների գծով դեբիտորական պարտքեր, երբ ծառայությունները մատուցված են: Էներգետիկ ծառայություններից եկամուտները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ «Ծառայությունների մատուցումից եկամուտներ» հոդվածում (ծնթ. 17):

Դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում: 23(դ) ծանոթագրությունում ներկայացված են պարտքային ռիսկի և ակնկալվող պարտքային ռիսկի վերլուծության վերաբերյալ բացահայտումները:

| 6. Տրված փոխառություններ | Փոխառության մայր գումար | Արժույթ | Փոխառության ձևակերպման ամսաթիվ | Փոխառության վերադարձման ամսաթիվ | Տարեկան տոկոսա-դրույք (%) | Փոխառության մնացորդը առ 31 դեկտեմբերի (հազար դրամ) 2020 Մայր գումար | 2020 Ստացվելիք տոկոսներ | 2019 Մայր գումար | 2019 Ստացվելիք տոկոսներ | Տոկոսային եկամուտ (հազար դրամ) 2020 | 2019 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ | 288,822,540 | ՀՀ դրամ | 21.04.2017 | Մինչև 96 ամիս | 5% | 222,903 | 864 | 173,104 | 808 | 8,977 | 6,989 |
| «ԱԳԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲԸ | 479,216,850 | ՀՀ դրամ | 31.08.2017 | Մինչև 96 ամիս | 3%-4% | 368,713 | 1,199 | 349,316 | 1,126 | 15,004 | 10,044 |
| «Գլոբալ Կրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ | 557,025,000 | ՀՀ դրամ | 31.08.2017 | Մինչև 96 ամիս | 3%-4% | 431,464 | 1,441 | 455,210 | 1,613 | 17,178 | 15,841 |
| Ագրոլիզինգ ԼՎԿ ՍՊԸ | 31,725,200 | ՀՀ դրամ | 19.05.2020 | Մինչև 96 ամիս | 4%-6% | 31,316 | - | - | - | 363 | - |
| Արմենիա Լիզինգ Քամփնի ՈւՎԿ ՓԲԸ | 7,434,784 | ՀՀ դրամ | 17.03.2020 | Մինչև 96 ամիս | 4%-6% | 7,434 | 35 | - | - | 67 | - |
| | | | | | | **1,061,830** | **3,539** | **977,630** | **3,547** | **41,589** | **32,874** |
| **Ակնկալվող պարտքային կորուստներ** | | | | | | **(11,640)** | **-** | **(11,640)** | **(10,593)** | | |
| | | | | | | **1,050,190** | **3,539** | **967,037** | **3,547** | | |
| Ոչ ֆինանսական միջնորդ կազմակերպություններ | 45,681 | ԱՄՆ դոլար | 01.04.2004 | 01.04.2014 | 5% | 9,040 | - | 9,040 | - | - | - |
| Ոչ ֆինանսական միջնորդ կազմակերպություններ | 185,535 | ԱՄՆ դոլար | 01.06.2010 | 01.06.2020 | 5% | 86,013 | 29,995 | 86,013 | 28,134 | 1,861 | 4,265 |
| Ոչ ֆինանսական միջնորդ կազմակերպություններ | 22,148 | ԱՄՆ դոլար | 01.06.2005 | 01.06.2015 | 5% | 4,645 | - | 4,645 | - | - | - |
| | | | | | | **99,698** | **29,995** | **99,698** | **28,134** | **1,861** | **4,265** |
| **Պարտքային կորուստներ** | | | | | | | | | | | |
| Ոչ ֆինանսական միջնորդ կազմակերպություններ | | | | | | (9,040) | - | (9,040) | - | | |
| Ոչ ֆինանսական միջնորդ կազմակերպություններ | | | | | | (86,013) | (29,995) | (86,013) | (28,134) | | |
| Ոչ ֆինանսական միջնորդ կազմակերպություններ | | | | | | (4,645) | - | (4,645) | - | | |
| | | | | | | **(99,698)** | **(29,995)** | **(99,698)** | **(28,134)** | | |
| | | | | | | **1,050,043** | **3,539** | **967,037** | **3,547** | **43,450** | **37,139** |

**Փոխառությունների ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը ներկայացված է ստորև՝**

| | 2020թ. դեկտեմբերի 31 | 2019թ. դեկտեմբերի 31 |
|---|---|---|
| | **հազար դրամ** | **հազար դրամ** |
| Տարեսկզբի մնացորդ | 138,425 | 151,162 |
| Տարվա ընթացքում պահուստի աճ | 2,908 | 4,265 |
| Պահուստի ապաճանաչում (ներառվել է այլ եկամուտներում) | (471) | (17,002) |
| **Տարեվերջի մնացորդ** | **140,862** | **138,425** |

## 7. Ժամկետային ավանդներ

| Բանկի անվանում | Ավանդի մայր գումար | Արժույթ | Ավանդի ձևակերպման ամսաթիվ | Ավանդի վերադարձման ամսաթիվ | Տարեկան տոկոսադրույք (%) | Ժամկետային ավանդների մնացորդը առ 31 դեկտեմբերի (հազար դրամ) 2020թ. Մայր Գումար | 2020թ. Ստացվելիք տոկոսներ | 2019թ. Մայր Գումար | 2019թ. Ստացվելիք տոկոսներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| «Արարատբանկ» ԲԲԸ | 99,940 | ԱՄՆ դոլար | 06.09.2018թ | 10.09.2020թ. | 4.25% | - | - | 47,941 | - |
| | | | | | | - | - | **47,941** | - |
| **Ակնկալվող պարտքային կորուստներ** | | | | | | - | - | **(847)** | - |
| | | | | | | - | - | **47,094** | - |
| «Արարատբանկ» ԲԲԸ | 99,940 | ԱՄՆ դոլար | 10.09.2020թ | 11.09.2023թ. | 4.65% | 52,228 | - | - | - |
| | | | | | | **52,228** | - | - | - |
| **Ակնկալվող պարտքային կորուստներ** | | | | | | **(316)** | - | - | - |
| | | | | | | **51,912** | - | - | - |
| «Ինեկոբանկ» ՓԲԸ | 50,000 | ՀՀ դրամ | 07.04.2020թ | 07.04.2021թ. | 9.5% | 50,000 | - | - | - |
| | | | | | | **50,000** | - | - | - |
| **Ակնկալվող պարտքային կորուստներ** | | | | | | **(302)** | - | - | - |
| | | | | | | **49,698** | - | - | - |
| «Ակբա բանկ» ԲԲԸ | 50,000 | ՀՀ դրամ | 07.07.2020թ | 08.07.2021թ. | 8.3% | 50,000 | - | - | - |
| | | | | | | **50,000** | - | - | - |
| **Ակնկալվող պարտքային կորուստներ** | | | | | | **(302)** | - | - | - |
| | | | | | | **49,698** | - | - | - |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| «Ակբա բանկ» ՓԲԸ | 70,000 | ՀՀ դրամ | 20.11.2020թ. | 22.11.2021թ. | 8.5% | 70,000 | - | - | - |
| | | | | | | **70,000** | - | - | - |
| **Ակնկալվող պարտքային կորուստներ** | | | | | | **(423)** | - | - | |
| | | | | | | **69,577** | - | - | - |
| «Ակբա բանկ» ՓԲԸ | 80,000 | ՀՀ դրամ | 20.11.2020թ. | 22.11.2021թ. | 8.5% | 80,000 | - | - | - |
| | | | | | | **80,000** | - | - | - |
| **Ակնկալվող պարտքային կորուստներ** | | | | | | **(484)** | - | - | |
| | | | | | | **79,516** | - | - | - |
| «Ակբա բանկ» ՓԲԸ | 40,000 | ՀՀ դրամ | 07.07.2020թ | 08.07.2021թ. | 8.3% | | - | - | - |
| | | | | | | **40,000** | - | - | - |
| **Ակնկալվող պարտքային կորուստներ** | | | | | | **(242)** | - | - | |
| | | | | | | **39,758** | - | - | - |
| «Ակբա բանկ» ՓԲԸ | 30,000 | ՀՀ դրամ | 07.07.2020թ | 08.07.2021թ. | 8.3% | 30,000 | - | - | - |
| | | | | | | **30,000** | - | - | - |
| **Ակնկալվող պարտքային կորուստներ** | | | | | | **(181)** | - | - | |
| | | | | | | **29,819** | - | - | - |
| «Ակբա բանկ» ՓԲԸ | 50,000 | ՀՀ դրամ | 20.11.2020թ. | 22.11.2021թ. | 8.5% | 50,000 | - | - | - |
| | | | | | | **50,000** | - | - | - |
| **Ակնկալվող պարտքային կորուստներ** | | | | | | **(302)** | - | - | |
| | | | | | | **49,698** | - | - | - |

## 8. Դրամական միջոցներ

| | 2020թ. դեկտեմբերի 31 հազար դրամ | 2019թ. դեկտեմբերի 31 հազար դրամ |
|---|---|---|
| Ընթացիկ հաշիվներ բանկերում | 208,990 | 51,060 |
| Հատուկ հաշիվներ կենտրոնական գանձապետարանում-գործակալության պայմանագրեր | 17,565 | 126,327 |
| Հատուկ հաշիվներ կենտրոնական գանձապետարանում-դրամաշնորհային պայմանագրեր | 421 | 387 |
| | **226,976** | **177,774** |

Ծանոթագրություն 23-ում ներկայացված է կենտրոնական գանձապետարանում և բանկում մնացորդների արժույթները:

## 9. Ակտիվներին վերաբերող շնորհներ

| | 2020թ. հազար դրամ | 2019թ. հազար դրամ |
|---|---|---|
| Տարեսկզբի մնացորդ | 73,234 | 128,104 |
| Ավելացումներ (եկամուտներին վերաբերող շնորհից) | - | 79,734 |
| Եկամտի ճանաչում (համաձայն դրամաշնորհային համաձայնագրի)* | - | (79,734) |
| Եկամտի ճանաչում (ծն. 14) | (53,608) | (54,870) |
| **Տարեվերջի մնացորդ** | **19,626** | **73,234** |

(*) ՄԱԿ զարգացման ծրագրի կողմից տրամադրվել է դրամաշնորհ որպես շրջանառու ֆոնդ (ծնթ.1)

Ակտիվներին վերաբերող շնորհների տարեվերջի մնացորդը գոյացել է հիմնական միջոցներից և ոչ նյութական ակտիվներից:

## 10. Ստացված փոխառություններ

| Փոխատուի անվանում | Մայր գումարը | Ստացման արժույթը | Ստացման ամսաթիվ | Մարման ամսաթիվ | Տոկոսադրույք (%) | Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ (հազար դրամ) 2020թ. Մայր գումար | 2020թ. Տոկոս | 2019թ. Մայր գումարը | 2019թ. Տոկոս | Տոկոսային ծախս (հազար դրամ) 2020թ. Տոկոս | 2019թ. Տոկոս |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն | 1,740,568 | հազար ՀՀ դրամ | 30.07.2012թ. | 10.11.2045թ. | 0.75% | 1,563,078 | 1,670 | 1,597,883 | 1,706 | 11,914 | 12,140 |
| ՀՀ ֆինանսների նախարարություն | 4,846,628 | ԱՄՆ դոլար | 30.07.2012թ. | 10.11.2045թ. | 0.75% | 2,255,247 | 2,374 | 2,116,654 | 2,260 | 16,236 | 16,042 |
| | | | | | | **3,818,325** | **4,044** | **3,714,537** | **3,966** | **28,150** | **28,182** |

Տրամադրված փոխառությունները ֆինանսական միջոցներ են, որոնք, համաձայն Հիմնադրամի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև կնքված գործակալության պայմանագրի, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվել են Հիմնադրամի կառավարմանը «էներգախնայողության ծրագրի» իրականացման նպատակով: Հիմնադրամը ծրագրի շրջանակներում հանրային նշանակության շինություններում էներգախնայողության ներդրումներ է կատարում, որն իրականացնելու նպատակով իր անունից պայմանագրեր է կնքում կապալառուների հետ և միաժամանակ էներգախնայողության ծառայությունների մատուցման պայմանագիր կնքում հանրային օբյեկտների հետ, որով սահմանվում է հանրային օբյեկտներին մատուցվելիք ծառայությունների արժեքի տարաժամկետ մարման ժամանակացույցը:

Հիմնադրամի արտարժութային ռիսկերի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 23-ում:

## 11. Հետաձգված եկամուտ

| | 2020թ. | 2019թ. |
|---|---|---|
| | հազար դրամ | հազար դրամ |
| Տարեսկզբի մնացորդ | 12,831 | 332,721 |
| Ավելացում | 156,702 | 114,715 |
| Շնորհների հետ վերադարձ | (95) | (277,342) |
| Տեղափոխում ակտիվներին վերաբերող շնորհի | - | (79,734) |
| Եկամտի ճանաչում (ծնթ. 14) | (106,341) | (73,493) |
| Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից եկամուտ | (921) | (4,036) |
| **Տարեվերջի մնացորդ** | **62,176** | **12,831** |

Հետաձգված եկամտի տարեվերջի մնացորդը գոյացել է հետևյալ աղբյուրներից՝

| | 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | |
|---|---|---|---|---|
| | Միջազգային զարգացման ընկերակ-ցություն | Կանաչ կլիմայի հիմնադրամ | Միջազգային զարգացման ընկերակ-ցություն | Կանաչ կլիմայի հիմնադրամ |
| | հազար դրամ | հազար դրամ | հազար դրամ | հազար դրամ |
| «Արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի նախապատրաստման ծրագիր» | 10,631 | - | 10,657 | - |
| «Երկրաջերմային էներգիայի հետախուզական հորատման ծրագիր» | 406 | - | 406 | - |
| «Էներգախնայողության ծրագիր» | 1,764 | - | 1,764 | - |
| ՎԷԸԾ ներդրումային պլանի նախապատրաստման ծրագիր | - | - | 4 | - |
| Նախապատրաստման աջակցության ծրագիր | - | 49,375 | | |
| | **12,801** | **49,375** | **12,831** | **-** |

## 12. Կրեդիտորական պարտքեր

| | 2020թ. դեկտեմբերի 31 հազար դրամ | 2019թ. դեկտեմբերի 31 հազար դրամ |
|---|---|---|
| Կրեդիտորական պարտքեր աշխատանքների և ծառայությունների գծով | 1,972 | 16,734 |
| **Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ, բացառությամբ վարկերի և փոխառությունների** | **1,972** | **16,734** |
| Հաճախորդներից կանխավճարներ | 81,245 | 41,311 |
| Փոխհատուցումներ աշխատակիցներին | 15,616 | 10,426 |
| Վճարվելիք հարկեր | 1,104 | 3,383 |
| Այլ | 736 | 130 |
| | **100,673** | **71,984** |

Որպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ դասակարգված առևտրային կրեդիտորական պարտքերի իրական արժեքը հաշվեկշռային արժեքից էականորեն չի տարբերվում:

Վճարվելիք հարկերը և պարտավորությունները ներառում են հետևյալ հարկատեսակների գծով մնացորդները՝

| | 2020թ. դեկտեմբերի 31 հազար դրամ | 2019թ. դեկտեմբերի 31 հազար դրամ |
|---|---|---|
| Ավելացված արժեքի հարկ | - | 1,047 |
| Եկամտային հարկ | 945 | 2,266 |
| Այլ | 159 | 70 |
| | **1,104** | **3,383** |

Կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

## 13. Վարձակալություն

Հիմնադրամը վարձակալում է գրասենյակային տարածք Երևան քաղաքում: Վարձակալությունը մեկնարկել է 2017թ. օգոստոսի 25-ին և ավարտվում է 2025թ. օգոստոսի 31-ին: Վարձակալությունը կարող է չեղարկվել ցանկացած կողմի ցանկությամբ՝ նախապես 4 ամիս առաջ մյուս կողմին տեղեկացնելով: Ամսական վարձավճարը կազմում է 1,110 հազար դրամ (ներառյալ եկամտային հարկը):

Վարձակալության գծով Օգտագործման իրավունքով ակտիվը և Վարձակալության գծով պարտավորությունը ճանաչվել են 01.01.2019թ.-ից (ծնթ. 22):

**Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ**

| | Հող և շենք հազար դրամ |
|---|---|
| **31 դեկտեմբեր 2019թ.** | **51,638** |
| Ամորտիզացիա | (8,606) |
| **31 դեկտեմբեր 2020թ.** | **43,032** |

**Վարձակալական պարտավորություն**

| | Հող և շենք |
|---|---|
| | հազար դրամ |
| **31 դեկտեմբեր 2019թ.** | **55,916** |
| Տոկոսային ծախս | 5,722 |
| Վարձավճարներ | (13,332) |
| **31 դեկտեմբեր 2020թ.** | **48,306** |

## 14. Շնորհներից եկամուտ

| | 2020թ. | 2019թ. |
|---|---|---|
| | հազար դրամ | հազար դրամ |
| Ակտիվներին վերաբերող շնորհներից (ծնթ. 9) | 53,608 | 54,870 |
| Ակտիվներին վերաբերող շնորհներից (ծնթ. 9) | - | 79,734 |
| Հետաձգված եկամտից (ծնթ. 11) | 106,341 | 73,493 |
| | **159,949** | **208,097** |

## 15. Ֆինանսական եկամուտ

| | 2020թ. | 2019թ. |
|---|---|---|
| | հազար դրամ | հազար դրամ |
| Տրամադրված փոխառություններից տոկոսային եկամուտ (ծնթ. 6) | 43,450 | 37,139 |
| Բանկային հաշվի մնացորդների վրա հաշվարկված տոկոսային եկամուտ | 16,113 | 2,869 |
| | **59,563** | **40,008** |

## 16. Ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստ

| | 2020թ. | 2019թ. |
|---|---|---|
| | հազար դրամ | հազար դրամ |
| Տրամադրված փոխառությունների գծով արժեզրկման կորստի ապաճանաչում (կորուստ) | (2,908) | 5,219 |
| Բանկային ավանդների գծով արժեզրկման կորստի ապաճանաչում(կորուստ) | (1,705) | 361 |
| Դեբիտորական պարտքերի գծով արժեզրկման կորուստ | 1,792 | (2,300) |
| | **(2,821)** | **3,280** |

## 17. Ծառայությունների մատուցումից եկամուտ

| | 2020թ. | 2019թ. |
|---|---|---|
| | հազար դրամ | հազար դրամ |
| Խորհրդատվական ծառայություններ | 50,483 | 19,833 |
| Էներգետիկ ծառայություններ | 40,784 | 45,781 |
| Այլ | - | - |
| | **91,267** | **65,614** |

## 18. Ծրագրային ծախսեր

| | 2020թ. հազար դրամ | 2019թ. հազար դրամ |
|---|---|---|
| «Երկրաջերմային էներգիայի հետախուզական հորատման ծրագիր» | 21 | 3,121 |
| «Արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի նախապատրաստման ծրագիր» | 9 | 45,290 |
| «Էներգախնայողության ծրագիր» | - | 192 |
| Կայուն Զարգացման Նպատակների իրագործման նորարարական լուծումներ | 18,738 | 25,082 |
| | **18,768** | **73,685** |
| Հիմնական միջոցների մաշվածություն և ամորտիզացիա | 53,608 | 54,870 |
| | **72,376** | **128,555** |

## 19. Վարչական ծախսեր

| | 2020թ. հազար դրամ | 2019թ. հազար դրամ |
|---|---|---|
| Փոխհատուցում աշխատակիցներին | 145,708 | 110,757 |
| Ստացված ծառայություններ | 11,493 | 13,159 |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 9,910 | 11,551 |
| Վարձակալության ծախսեր | 5,722 | 6,511 |
| Աուդիտի և խորհրդատվական ծախսեր | 7,740 | 4,750 |
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | 1,761 | 3,129 |
| Գրասենյակային և կոմունալ ծախսեր | 3,196 | 2,204 |
| Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր | 2,391 | 2,192 |
| Բանկային և ապահովագրության ծախսեր | 3,324 | 2,042 |
| Այլ | 5,137 | 12,481 |
| | **196,382** | **168,776** |

## 20. Փոխարժեքի տարբերությունից օգուտ/ (կորուստ)

| | 2020թ. հազար դրամ | 2019թ. հազար դրամ |
|---|---|---|
| Տրված փոխառությունների և դեբիտորական պարտքերի գծով | 5,462 | (506) |
| Ստացված փոխառությունների գծով | (185,959) | 18,479 |
| Այլնի գծով | 5,418 | - |
| | **(175,079)** | **17,973** |

## 21. Շահութահարկի գծով ծախս

| | 2020թ. հազար դրամ | 2019թ. հազար դրամ |
|---|---|---|
| Ընթացիկ շահութահարկ | 4,913 | 8,172 |
| | **4,913** | **8,172** |

ՀՀ Հարկային օրենսգրքով շահութահարկի դրույքը 2020թ.-ի համար սահմանված է 18% (2019թ.՝ 20%)։

**Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրում**

| | 2020թ. | | 2019թ. | |
|---|---|---|---|---|
| | **հազար դրամ** | (%) | **հազար դրամ** | (%) |
| **Արդյունք մինչև հարկումը (ՖՀՄՍ)** | **(158,466)** | | **20,494** | |
| Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2019թ.՝ 20%) | (28,524) | 18.0% | 4,099 | 20.0% |
| Փոխարժեքի տարբերության ազդեցությունը | 31,514 | 19.9% | (3,595) | (17.5%) |
| (Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ | 1,923 | 1.2% | 7,668 | 37.4% |
| **Շահութահարկի գծով ծախս** | **4,913** | **39.1%** | **8,172** | **39.9%** |

Հաշվետու ու նախորդ տարիների չնվազեցվող ծախսերը հիմնականում պայմանավորված են վարչական ծախսերի որոշ մասի չնվազեցմամբ:

## 22. ՖՀՄՍ 16-ի փոփոխության ազդեցություն

Հիմնադրամը ՖՀՄՍ 16-ին անցումը կատարել է 2019թ. հունվարի 1-ին: Հիմնադրամը որոշել է չվերաներկայացնել համեմատական տվյալները նշված ստանդարտի ընդունման արդյունքում: Դրա պատճառով վերափոխված պահանջները չեն արտացոլվել 31,12,2018թ.-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններում: Փոխարենը՝ նշված փոփոխությունները կատարվել են ստանդարտի առաջին որդեգրման ամսաթվին (2019թ. հունվարի 1-ին) և ճանաչվել են սեփական կապիտալի սկզբնական մնացորդում: ՖՀՄՍ 16 ներկայացնում է վարձակալի միասնական հաշվառման մոդել, որը պահանջում է ակտիվների և պարտավորությունների ճանաչում բոլոր վարձակալությունների գծով, ինչպես նաև տալիս է հնարավորություն բացառել կարճաժամկետ (մինչև 12 ամիս ժամկետով) վարձակալությունները և նրանք, որոնց հիմքում ընկած ակտիվը փոքրարժեք է:

ՖՀՄՍ 16-ի ընդունման արդյունքում Հիմնադրամը ճանաչել է հետևյալ օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալական պարտավորություն:

| ՀՀՄՍ 17 | ՖՀՄՍ 16 | |
|---|---|---|
| | Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ | Վարձակալության գծով պարտավորություն |
| Գործառնական վարձակալություն | Գրասենյակի տարածք՝ օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվել է վարձակալական պարտավորության գումարի չափով՝ ճշգրտված վարձակալական կանխավճարների կամ պարտքերի գումարներով | Չափվել է վարձավճարների ներկա արժեքով՝ զեղչված Հիմնադրամի կողմից լրացուցիչ փոխառու միջոցների ներգրավման դրույքով 2019թ. հունվարի 1-ի դրությամբ:<br><br>Հիմնադրամի կողմից լրացուցիչ փոխառու միջոցների ներգրավման դրույքը հավասարվում է դրույքին, որով Հիմնադրամը հնարավորություն ունի ներգրավել փոխառու միջոցներ անկախ փոխատուից: Հաշվարկներում կիրառվել է 11.0% միջին կշռված դրույքը: |
| 13,332 հազար դրամ՝ տարեկան վարձավճար | 60,244 հազար դրամ՝ 01.01.2019թ.-ի դրությամբ | 62,737 հազար դրամ՝ 01.01.2019թ.-ի դրությամբ |

## 23. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Իր գործունեության արդյունքում Հիմնադրամը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ
- Արտարժութային ռիսկ
- Այլ գնային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Հիմնադրամը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Հիմնադրամի նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի Հիմնադրամի նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

**(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ**

Հիմնադրամի հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Առևտրային դեբիտորական պարտքեր,
- Տրված փոխառություններ,
- Ժամկետային ավանդներ,
- Դրամական միջոցներ,
- Առևտրային կրեդիտորական պարտքեր,
- Վարձակալության գծով վճարվելիք գումարներ,
- Ստացված փոխառություններ:

**(բ) Ֆինանսական գործիքներ կատեգորիաներով**

Ֆինանսական հաշվետվություններում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ խմբերին.

| | 2020թ. | 2019թ. |
|---|---|---|
| | **հազար դրամ** | **հազար դրամ** |
| **Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ** | | |
| Դեբիտորական պարտքեր | 2,201,263 | 2,692,175 |
| Տրամադրված փոխառություններ | 1,053,729 | 970,583 |
| Դրամական միջոցներ | 226,976 | 177,774 |
| Ժամկետային ավանդներ | 419,676 | 47,094 |
| | **3,901,644** | **3,887,626** |
| **Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ** | | |
| Ստացված փոխառություններ | 3,822,369 | 3,718,503 |
| Վարձակալության գծով պարտավորություն | 48,306 | 55,916 |
| Կրեդիտորական պարտքեր | 1,972 | 16,734 |
| | **3,872,647** | **3,791,153** |

**(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ**

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են՝ դրամական միջոցները, տրված փոխառությունները, ավանդները, առևտրային դեբիտորական պարտքերը, առևտրային կրեդիտորական պարտքերը, ստացված փոխառությունները և վարձակալության գծով պարտավորությունները:

Դրամական միջոցների, տրված փոխառությունների, ավանդների, առևտրային դեբիտորական պարտքերի, առևտրային կրեդիտորական պարտքերի, ստացված փոխառությունների և վարձակալության գծով պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

Իրական արժեքի հիերարխիայի, գնահատման մեթոդների և իրական արժեքի որոշման հետ կապված նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալների մանրամասները, որոնք ընդգրկված են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում ներկայացված են Ծանոթագրություն 29-ում:

**(դ) Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ**

Հիմնադրամի նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ չանդրադառնալով նրա մրցունակության և ճկունության վրա: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

**Շուկայական ռիսկ**

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի՝ հատկապես՝ արտարժութային ռիսկի, որը բխում է ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

**Արտարժութային ռիսկ**

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Հիմնադրամի՝ ստացված փոխառություններից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Հիմնադրամին ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով:

| 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | ԱՄՆ դոլարով | Եվրոյով |
|---|---|---|
| | **հազար դրամ** | **հազար դրամ** |
| Ֆինանսական ակտիվներ | | |
| Դրամական միջոցներ | 65,404 | 14 |
| Ժամկետային ավանդներ | 52,228 | - |
| | **183,022** | **14** |
| Ֆինանսական պարտավորություններ | | |
| Ստացված փոխառություններ | 2,255,247 | - |
| | **2,255,247** | **-** |
| **Զուտ** | **(2,438,269)** | **14** |

| 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | ԱՄՆ դոլարով | Եվրոյով |
|---|---|---|

| | հազար դրամ | հազար դրամ |
|---|---|---|
| Ֆինանսական ակտիվներ | | |
| Դրամական միջոցներ | 8,991 | 11 |
| Ժամկետային ավանդներ | 47,941 | - |
| | **56,932** | **11** |
| Ֆինանսական պարտավորություններ | | |
| Ստացված փոխառություններ | 2,116,653 | - |
| | **2,116,653** | **-** |
| **Զուտ** | **(2,059,721)** | **11** |

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի զգայունությունը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ դրամի 10% (2019թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2019թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2019թ.՝ 10%):

Դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2019թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

| | ԱՄՆ դոլարի ազդեցություն | | Եվրոյի ազդեցություն | |
|---|---|---|---|---|
| | **2020թ.** | **2019թ.** | **2020թ.** | **2019թ.** |
| Արդյունք | (243,827) | (206,057) | 1 | 1 |
| | **(243,827)** | **(206,057)** | **1** | **1** |

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Հիմնադրամի՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

**Պարտքային ռիսկ**

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Հիմնադրամի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները, դեբիտորական պարտքերը, տրամադրված փոխառությունները և ժամկետային ավանդները:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Հիմնադրամի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և ավանդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է ավանդները տարբեր բանկերում պահելու միջոցով և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Հիմնադրամը շարունակաբար հսկում է հաճախորդների պարտքի հատկանիշները՝ ելնելով պարտքի վարկանիշային քարտից: Եթե հնարավոր է, օգտագործվում են նաև հաճախորդների վերաբերյալ արտաքին վարկանիշներ և/կամ հաշվետվություններ: Հիմնադրամի քաղաքականությունն է համագործակցել միայն վճարունակ գործընկերների հետ:

Հաճախորդների հետ պարտքերի վերաբերյալ պայմանների համաձայնեցումը պետք է անցնի հաստատման գործընթաց, որը ենթադրում է վարկանիշային քարտի կիրառում: Ընթացիկ պարտքային ռիսկը կառավարվում է պարբերական ժամկետային վերլուծություններ կատարելու միջոցով՝ համատեղելով յուրաքանչյուր հաճախորդի համար կրեդիտորական պարտքի սահմանաչափի որոշմամբ:

Դեբիտորական պարտքերը ներառում են մեծ քանակությամբ հաճախորդներ տարբեր արդյունաբերական և աշխարհագրական գոտիներում: Առևտրային դեբիտորական պարտքերի համար Հիմնադրամը գրավ չի վերցնում: Սակայն, տրամադրված փոխառությունները կարող են ապահովված լինել գրավով:

**Դեբիտորական պարտքեր**

Հիմնադրամը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը, «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ:

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ: Դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից:

**2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

| | Ակնկալվող պարտքային կորուստ | Համախառն հաշվեկշռային արժեք | Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում |
|---|---|---|---|
| Ընթացիկ էներգախնայողության ներդրումներ | | 593,333 | |
| էներգետիկ ծառայություններ | | 39,685 | |
| | 0.30% | 633,018 | 1,754 |
| Ոչ ընթացիկ էներգախնայողության ներդրումներ | | 1,575,245 | |
| | 0.30% | 1,575,245 | 5,246 |
| **Ընդամենը** | | **2,208,263** | **7,000** |

**Տրամադրված փոխառություններ**

Նպատակային փոխառություններ են տրամադրվում ֆինանսական և ոչ ֆինանսական միջնորդ կազմակերպություններին և առևտրային բանկերին «Հայաստանի Հանրապետության չգազիֆիկացված համայնքների իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց էներգաարդյունավետության բարձրացման ծրագրի» իրականացման համար: Ի սկզբանե ծրագիրը ուղղված է եղել Հայաստանի շուրջ 280 չգազաֆիկացված համայնքներին, որոնք ընդգրկում են շուրջ 37 հազար տնային տնտեսություններ: Հետագայում (սկսած 2020թ.-ից) ծրագիրը ընդլայնվել է Հայաստանի Հանրապետության բոլոր համայնքներով (տե՜ս ծանոթագրություն 1): Ֆինանսական հաստատությունները (վարկային կազմակերպությունները և առևտրային բանկերը) կրում են վարկերի հավաքագրման ռիսկը: Ոչ ֆինանսական միջնորդ կազմակերպությունների միջոցով տրամադրված փոխառությունների հավաքագրումն ապահովվում է վերջնական փոխառուի մարումների հիման վրա: Այս փոխառությունները լիովին տրամադրված են:

Տրամադրված փոխառություններն ապահովված չեն:

**Ժամկետային ավանդներ**

Ակնկալվող պարտքային կորստի տոկոսադրույքները հիմնված են արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխության վրա. այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում կորպորատիվ վարկանիշը: Վարկանշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's և Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին:

**Իրացվելիության ռիսկ**

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, որ Հիմնադրամն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:
Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:
Հետևյալ աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Հիմնադրամը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

| **2020թ.**<br>**հազար դրամ** | **Անտոկոս** | **Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով** | **Ընդամենը** |
|---|---|---|---|
| Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%) | | 0.75% | |
| Մինչև 6 ամիս | - | 44,696 | 44,696 |
| 6 ամսից մինչև 1 տարի | 18,468 | 40,651 | 59,119 |
| 1-5 տարի | - | 340,069 | 340,069 |
| Ավելի քան 5 տարի | - | 3,396,953 | 3,396,953 |
| | **18,468** | **3,822,369** | **3,840,837** |

| **2019թ.**<br>**հազար դրամ** | **Անտոկոս** | **Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով** | **Ընդամենը** |
|---|---|---|---|
| Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%) | | 0.75% | |
| Մինչև 6 ամիս | - | 44,739 | 44,739 |
| 6 ամսից մինչև 1 տարի | 27,291 | 40,529 | 67,820 |
| 1-5 տարի | - | 325,169 | 325,169 |
| Ավելի քան 5 տարի | - | 3,308,066 | 3,308,066 |
| | **27,291** | **3,718,503** | **3,745,794** |

Հիմնադրամն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և դեբիտորական պարտքերը:

## 24. Պայմանականություններ

### 24.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ ՀՀ-ում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա

տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով: Սակայն, Հիմնադրամի ղեկավարության կարծիքով, Հիմնադրամը, չլինելով շահույթ հետապնդող կազմակերպություն, ունի դիվերսիֆիկացված եկամուտների աղբյուրներ, որոնք քիչ են կախված գործարար միջավայրի փոփոխություններից: Հիմնադրամի կողմից իրականացվում են համապատասխան միջոցառումներ ռիսկերի կառավարման, դրանց նվազեցման և կայունություն ու անընդհատություն ապահովելու ուղղությամբ: Հիմնադրամի եկամուտները բաղկացած են դրամաշնորհային միջոցներից, ֆինանսական կազմակերպություններից ստացված փոխառությունների տոկոսներից և տեղական ու արտաքին շուկայում իրականացվող խորհրդատվական ծառայություններից: Այն շարունակաբար ընդլայնում է ծառայությունների ոլորտը, դիվերսիֆիկացնում է փոխառությունների պորտֆելը և ներգրավվում է դրամաշնորհային նոր ծրագրերի մեջ:

Հիմնադրամի ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Հիմնադրամի տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

### 24.2 Հարկեր

ՀՀ հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները ՀՀ-ում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա:

### 24.3 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ՝ Հիմնադրամը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Հիմնադրամը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, ՀՀ-ում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են լրացուցիչ պարտավորություններ առաջացնել:

## 25. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները բանկերում և մինչև 3 ամիս մարման ժամկետ ունեցող կարճաժամկետ ներդրումները: Ֆինանսական տարվա վերջի դրությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացված բանկերում մնացորդները կարող են համադրվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվության հոդվածների հետ հետևյալ կերպ.

| | 2020թ. դեկտեմբերի 31 | 2019թ. դեկտեմբերի 31 |
|---|---|---|
| | հազար դրամ | հազար դրամ |
| Մնացորդներ բանկերում | 226,976 | 177,774 |
| Կարճաժամկետ ներդրումներ | - | - |
| | **226,976** | **177,774** |

## 26. Ֆինանսական գործունեության գծով պարտավորությունների շարժ

Հիմնադրամի պարտավորություններում ստացված փոխառություններից և վարձակալության գծով պարտավորություններից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

| 2020թ. | Փոխառություններ | Վարձակալության գծով | Ընդամենը |
|---|---|---|---|
| | հազար դրամ | հազար դրամ | հազար դրամ |
| **Հունվարի 1-ի դրությամբ** | **3,718,503** | **55,916** | **3,774,419** |
| Դրամային հոսքերից | | | |
| Վճարումներ (մայր գումարի) | (82,170) | (7,610) | (89,780) |
| Վճարումներ (տոկոսի մարում) | (28,072) | (5,722) | (33,794) |
| Ոչ դրամային հոսքերից | | | |
| Տոկոսի հաշվեգրում | 28,150 | 5,722 | 33,872 |
| Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/կորուստ | 185,958 | - | 185,958 |
| **Դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **3,822,369** | **48,306** | **3,870,675** |

| 2019թ. | Փոխառություններ | Վարձակալության գծով | Ընդամենը |
|---|---|---|---|
| | հազար դրամ | հազար դրամ | հազար դրամ |
| **Հունվարի 1-ի դրությամբ** | **3,818,169** | - | **3,818,169** |
| Դրամային հոսքերից | | | |
| Վճարումներ (մայր գումարի) | (81,242) | (6,821) | (88,063) |
| Վճարումներ (տոկոսի մարում) | (28,290) | (6,511) | (34,801) |
| Ոչ դրամային հոսքերից | | | |
| Տոկոսի հաշվեգրում | 28,182 | 6,511 | 34,693 |
| Ճանաչում | - | 62,737 | 62,737 |
| Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/կորուստ | (18,316) | - | (18,316) |
| **Դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **3,718,503** | **55,916** | **3,774,419** |

## 27. Կապակցված կողմերի հետ գործարքներ

### 27.1 Վերահսկողություն

Հիմնադրամի հիմնադիր և վերջնական վերահսկող կողմ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը:

### 27.2 Գործարքներ ղեկավարության հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Փոխհատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

| | 2020թ. հազար դրամ | 2019թ. հազար դրամ |
|---|---|---|
| Աշխատավարձ և պարգևատրումներ | 15,605 | 13,032 |
| | **15,605** | **13,032** |

### 27.3 Գործարքներ ՀՀ Ֆինանսների նախարարության հետ

| | 2020թ. հազար դրամ | 2019թ. հազար դրամ |
|---|---|---|
| Փոխառությունների մարում | 82,170 | 81,242 |
| Տոկոսային ծախս | 28,150 | 28,182 |
| | **110,320** | **109,424** |

## 28. Իրական արժեքի չափման բացահայտումներ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է այն ակտիվները և պարտավորությունները, որոնց իրական արժեքները բացահայտվել են ծանոթագրություններում.

| Հոդված | Իրական արժեք | Գնահատման մեթոդ | Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ | Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ |
|---|---|---|---|---|
| | հազար դրամ | | | |
| Տրված փոխառություններ | 1,053,729 | Ընթացիկ և ոչ ընթացիկ<br>Ծնթ. 2.4.2 | Մակարդակ 3 | Կիրառելի չէ |
| Ժամկետային ավանդներ | 419,676 | Ընթացիկ<br>Կարճաժամկետ (12 ամսից պակաս) ավանդների հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին | Մակարդակ 2 | Կիրառելի չէ |
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 2,203,140 | Ընթացիկ և ոչ ընթացիկ<br>Ծնթ. 2.4.3 | Մակարդակ 3 | Կիրառելի չէ |
| Ստացված փոխառություններ | 3,822,369 | Ընթացիկ և ոչ ընթացիկ<br>Ծնթ. 2.4.2 | Մակարդակ 3 | Կիրառելի չէ |
| Վարձակալության գծով պարտավորություն | 48,306 | Ընթացիկ և ոչ ընթացիկ<br>Զեղչվել է շուկայական տոկոսադրույքով | Մակարդակ 2 | Կիրառելի չէ |
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 1,972 | Ընթացիկ<br>Կարճաժամկետ (12 ամսից պակաս) կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին | Մակարդակ 3 | Կիրառելի չէ |

**Կարեն Ասատրյան**
Տնօրեն

**Գայանե Բարխանաջյան**
Ֆինանսական ղեկավար

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ

## ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## 2020թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ



ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 18/1, 3-րդհարկ, գրասենյակ 54, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ-կայք՝ www.pkfarmenia.com

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

PKF

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ

### ԿԱՐԾԻՔ

Մեր կողմից իրականացվել է «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

### ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՐ

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝այդ պահանջների համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

### ԱՅԼ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Հիմնադրամի 31.12.2019թ.-ի ֆինանսական հաշվետվությունների աուդիտը իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որը 30.04.2019թ.-ին արտահայտել է չձևափոխված կարծիք:

ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 18/1, 3-րդ հարկ, գրասենյակ 54, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ-կայք՝ www.pkfarmenia.com

## ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

PKF

### ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Հիմնադրամը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

### ԱՈՒԴԻՏՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ՝

**ՊԻ ՍԻ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ**

PKF

Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարված հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա՞ է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Հիմնադրամը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյո՞ք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

**Ք. Երևան- 14.05.2021թ.**

**ՊԻ ՍԻ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ**

Տնօրեն՝

Որակավորված աուդիտոր Գոռ Դավթյան

Որակավորված աուդիտոր Անահիտ Միրզոյան

ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 18/1, 3-րդ հարկ, գրասենյակ 54, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ-կայք՝ www.pkfarmenia.com

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 21.06.2021 18:08